

«Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

**«ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հոդված 1. «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության 2011 թվականի մայիսի 26-ի ՀՕ-172-Ն օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասում՝

1) 6-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հայաստանի Հանրապետության կառավարությանը կամ վարչապետին ենթակա պետական կառավարման մարմինների աշխատակազմերում».

2) 7-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Ինքնավար մարմինների աշխատակազմերում».

3) լրացնել հետևյալ բովանդակությամբ 7.1-րդ, 7.2-րդ և 7.3-րդ կետերով.

«7.1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի աշխատակազմում.

7.2. Հայաստանի Հանրապետության հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի աշխատակազմում.

7.3. Հայաստանի Հանրապետության հաշվեքննիչ պալատի աշխատակազմում.».

4) 12-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հայաստանի Հանրապետության նախարարություններին ենթակա մարմինների աշխատակազմերում.»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը: